

Գ. գլուխ 22 կը գրուի «դառանին արկանելիս», ինչպէս նաեւ թարգմանութեան մէջ այլուր արկանելիս յաճախ գործածուած է առ ի չգոյժ աւելի յարմար վերծանման: Օրինակ, հայերէն թարգմանութիւնը ունի Մարգարէութիւն եղեկիէլի Իէ. 7 «պաստառս յեզիպտոսէ արկանելիք քեզ ի փառս»: Մինչ արկանելիքի տեղ յունարէն բուն իմաստը բառացի կը կարգացուի «առ ի շուրջ պատել քեզ զփառս»: Հ. Հացունի հոս արկանելիս հանդերձ կը նկատէ⁽¹⁸⁾: Սակայն նոյնիսկ յունարէնը հանդերձ չէ նշանակած եւ յոյն թարգմանիչին պակասած է բառը: Սակայն հայ թարգմանիչը ուղած է խրթնութեան տեղի չտալ եւ Հայոց ծանօթ «առ ի շուրջ պատել քեզ զփառս» սովորութեամբ մը կամ անոր յատուկ իրով մը այդ տեղին իմաստը լիապէս տալ: Արդ պատուոյ համար, ինչպէս որ իր կարգին մանրամասնօրէն պիտի տեսնենք, զորք սփռելը նուիրագործուած եւ խիստ ծանօթ սովորութիւն մըն էր Հայոց, ինչպէս նաեւ զբացի ժողովուրդներու մէջ: Փաւստոս կը վկայէ որ Շապուհ Արշակ Բ-ը անպատուել ուղեց, կոչնականներուն մէջ ամէնէն վերջ անոր բազմական (զորք) սփռելով: Շապուհ Բագրատունւոյ կարծեցեալ պատմութեան մէջ կը վկայուի որ Ալի ամիրապետը իր նախարարներուն ի պատիւ զորք կը սփռէր (քազաւորն արկանէր բազմական): Մկրտիչ Նաղաշ Ազ Գոյունլու Շահ Օթմանէն կը պատուուէր ի վերայ իւրոյ քազաւորական խալիչային (զորք) լուսուցանելով: Մեր վկայութիւնները կրնանք երկար շարունակել հոս, սակայն քիչ վերջ արդէն զանոնք յառաջ պիտի բերենք իրենց յարմար տեղը:

ԲԱԶՄԱԿԱՆ

Այս հոմանիչը նախ կը գործածէ Փաւստոս, քանի մը անգամ այսպէս. «էարկ նմա բազմականս, եւ բազմեցոյց զնա, եւ եդ առաջի նորա ընթրիս», «եւ արկանել նմա բազմականս», «մինչ դեռ կայր ի բազմականին»⁽¹⁹⁾: Որոշ է որ ակնարկութիւնը փոռուած օթոցի մը կամ սփռոցի մը մասին է («էարկ», «արկանել նմա») որուն վրայ կը նստէին կամ կը բազմէին, այսինքն ուրիշ բառով զորք կամ կապերտ: Սակայն Հ. Հացունի տարբեր իմաստ կը ջանայ տալ բառին. «Բազմական: — Այսպէս կ'անուանէ Մանգակունին աղնուականաց նըստարանը (էջ 61), որուն կը ձայնակցին նաեւ ուրիշներ (Ոսկ. Մտթ. Բ, 67. Խոր. 142. Փաւստ. 207. Պատ. Ազ. 100), որոնցմէ Փաւստոս կը կոչէ նաեւ բազմակալ (67): Անոր գետնէն բարձրութիւնը տեսնաք Մանգակունւոյ վկայութեան մէջ, զոր կը հաստատէ Եղիշէ եւս, կոչելով տիկնանցը բարձրագահք տափարաց (174), որոյ մէջ

(18) Պատ. Հին Հայ Տարազի: — Վենետիկ, 1924, էջ 136:

(19) Պատ. Հայոց, Ս. Ղազար, 1914, էջ 262: